է ակրութիւն քո, և ապրա-
յութիւն քո ամենեցուն ան-
րիծ։ Շնորհեա մեզ երկիւղիւ
՝ի պաշտօն քո կանխել հա-
նապազ. պահել զքեզ ՝ի բո-
լոր սրտէ և ՝ի բովանդակ մի-
տաց, և յամենայն զօրու-
թենէ մերմէ պահել զպա-
տուիրանս քո։ Համբառնալ
առ քեզ զձեռս մեր ՝ի սքան-
չութիւն առանց բարկու-
թեան եւ երկմտութեան.
եւ դառնալ ՝ի քէն զշնորհս
եւ զողորմութիւն, եւ զա-
ւաքինաբար գործոյն յաջո-
ղութիւն։ Վասն զի դու ես
տէր կենաց եւ աստուած
ողորմութեանց. եւ քեզ վա-
յելէ փառք իշխանութիւն
եւ պատիւ այժմ եւ միշտ
եւ յաւիտեանս յաւիտենից.
ամէն։

Խաղաղութիւն ամենեցուն։
Աստուծոյ երկիւղածութիւն։

Զօրհնեսցուք զՏէր։

Փառք ամենազօր եւ յաղ-
թող սէրութեանդ կրկնի ա-
մենայն ծունր չերկրպագու-
թիւն, եւ փառաւորի յաւե-
նեցունց թագաւորութիւն
քո։ Նայեա չերկրպագու-
թիւնս մեր, եւ ասա մեզ
առնել զարդարութիւն ճըշ-
մարտութեան։ Վասն զի դու
ես աստուած խաղաղու-
թեան, որ բարձեր զմշնա-
մութիւն՝ի միջոյ, եւ ար-
ար զխաղաղութիւն չեր-
կիր եւ չերկինս։ Հեռաւո-
րաց եւ մերձաւորաց աւե-
տարանեցեր զնոր պարգեւս
քոյին բարեացդ։ Որում եւ
զմեզ մեծի շնորհացդ արժա-
նաւորս արասցես՝ գասելով
զնզ ՃՀանգիստ երկրպագու-
թիւն, աստուած մեր եւ տէր
մեր եւ փրկիչ չհաւս քրիս-
տոս։ Որ ես օրհնեալ զնզ
հօր եւ զնզ սուրբ հոգւոյդ,
այժմ եւ միշտ եւ յաւիտեան
յաւիտենից. ամէն։

Մաղթանք։

Ձերդս օրհնութեան եւ ՝ի
ձայն սաղմոսաց անպատար
վառաւորեմք զՀայր եւ զոր-
դի եւ զսուրբ հոգիդ այժմ
եւ միշտ եւ յաւիտեան յա-
ւիտենից. ամէն։

Օրհնեալ տէր մեր չհաւս
քրիստոս. ամէն։

Հայր մեր որ չերկինս։



Առաբես զոգի fo եւ սաճաս զնոսա,
եւ նորոգես զերեսս երկրի:

ՍԱՂՄՈՍ ՃԻԹ.

Օրհնութիւն ասպիճանաց:

Ի ՆԵՂՈՒԹԵԱՆ ԻՄՈՒՄ ես առաւել կարդացի, եւ լսաւ ինձ. աչք վրիժաց զանձն իմ՝ ի չարեաց նենգաւորաց եւ՝ ի լեզուէ չարէ:

Զի՞ տացի քեզ կամ զի՞նչ յաւելցի, լեզու նենգաւոր: Որպէս նետք հզօրի, զի մըխեալ են կայծակամբք կաղնեայ:

Վա՛յ է ինձ՝ զի ընդ երկար եղև պանդխտութիւն իմ, բնակեցայ ես՝ ի վրանս կեդարու:

Բազում անգամ բնակեաց անձն իմ ընդ այնոսիկ, որք ատէին զողջոյն:

Ես էի խաղաղարար, յորժամ խօսէի՝ մարտնչէին ընդ իս:

Տունք ղ:

ՍԱՂՄՈՍ ՃԻ.

Օրհնութիւն ասպիճանաց:

Համբարձի զաչս իմ՝ ի լերինս, ուստի եկեսցէ ինձ օգնութիւն:

Օգնութիւն ինձ՝ ի տեառնէ եկեսցէ, որ արար զերկինս եւ զերկիր:

Մի տար՝ ի սասանութիւն զոտն քո, եւ մի՛ նինջեսցէ պահապան քո:

Որպէս ոչ՝ նինջէ եւ ոչ՝ ի քուն երթայ պահապանն իսրայէլի:

Տէր պահեսցէ զքեզ, եւ աչք ընկալցի աջով ձեռամբ խաւսել:

Արեգակն՝ ի տուէ քեզ մի՛ մեղցէ, եւ մի՛ լուսին՝ ի գիշերի:

Տէր պահեսցէ զքեզ յամենայն չարէ, պահեսցէ աչք զանձն քո:

Տէր պահեսցէ զմուտս եւ զել քո՝ յայսմ հետէ մինչեւ յաւիտեան:

Տունք ը:

ՍԱՂՄՈՍ ՃԻԱ.

Օրհնութիւն ասպիճանաց:

Ուրախ եղէ ես որք ասէին

ցիս, ՚ի տուն տեառն երթիւ-
ցուք մեք։
Հասեալ կային ոսք մեր առ
դրունս քո, երուսաղէմ։
Ձերուսաղէմ վինեալ որպէս
քաղաք, եւ բնակութիւն իւր
շուրջ վնովաս։
Անդ ելին ազգք, ազգք տեառն,
վկայութիւնք Իսրայելի խոս-
տովան լինել անուան տեառն։
Անդ արկեալ են աթոռք դա-
տաստանի, աթոռս արկեալ
են ՚ի տան դաւթի։
Հարցէք զողջունի զերուսա-
ղեմ, եւ զվինութիւնէ՝ ցյ
սիրէք զսէր։
Եղիցի խաղաղութիւն ՚ի զօ-
րութեան քում, եւ վի-
նութիւն յաշտարակս յա-
մուրս քո։
Վասն եղբարց եւ ընկերաց
իմոց խօսեցայ զխաղաղու-
թիւն, վասն քո եւ վասն
տան տեառն աստուծոյ մե-
րոյ խնդրեցաք զբարութիւն
՚ի քէն։
Տունք ը։

ՍԱՂՄՈՍ ՃԻԲ.

Օրհնութիւն ասպիճանաց։

Ա՛ռ քեզ, տէր, համբարձի
զաչս իմ, որ բնակեալդ ես
՚ի յերկինս։
Որպէս աչք ծառայի ՚ի ձեռն
տեառն իւրոց եւ որպէս աչք
աղախնոյ ՚ի ձեռն տիկնոջ
իւրոյ։
Ա՛յնպէս են աչք մեր առ քեզ,
տէր աստուած մեր, մինչեւ
ողորմեսցիս ՚ի վերայ մեր։
Ողորմեայ մեզ, տէր, ողոր-
մեայ մեզ, զի բազում լցաք
արհամարհանօք։
Եւս առաւել լցան անձինք
մեր նախատանօք՝ որ նախա-
տէին զմեզ, եւ արհամարհա-
նօք ամբարտաւանիցն։
Տունք և։

ՍԱՂՄՈՍ ՃԻԳ.

Օրհնութիւն ասպիճանաց։

Եթէ ոչ տէր էր առ մեզ, ա-
սացէ Իսրայէլ, եթէ ոչ տէր
էր առ մեզ։
Ընդ յառնել մարդկան ՚ի մե-
ծոյ մեր, կենդանեացն կաո-
ցան կլանել զմեզ։
Իբարկանալ սրտմտութեամբ
նոցա ՚ի վերայ մեր, ապա եւ
ջուրք ուրեմն ընկղմեսցին
զմեզ։
Ընդ ուղիս անցին անձինք
մեր, անցին անձինք մեր ընդ
ջուրս անդադարս։
Օրհնեալ է տէր որ ոչ եա
զմեզ յոտս ատամանց նոցա։
Անձինք մեր ապրեցան որպէս
ճնճղուկ յորոգայթէ որսա-
ղաց։
Որոգայթք նոցա վշրեցան,
եւ մեք ապրեցաք։

Օգնութիւն է մեզ յանուա-
նէ տեառն, որ արար զեր-
կինս եւ զերկիր։
Տունք ը։

ՍԱՂՄՈՍ ՃԻԴ.

Օրհնութիւն ասպիճանաց։

Ո՛վք յուսայ ՚ի տէր՝ որպէս
լեառն սիոն, մի սասանեսցի
յաւիտեան՝ որ բնակեալն է
յերուսաղէմ։
Լերինք շուրջ են վնովաս,
տէր շուրջ է զժողովրդեամբ
իւրով յայսմհետէ մինչեւ
յաւիտեան։
Ոչ լմոցաս տէր զգաւազան
մեղաւորաց ՚ի վիճակս ար-
դարոց, եւ արդարք մի ձգ-
գեսցեն զձեռս իւրեանց յա-
նօրէնութիւն։
Բարի առնէ տէր բարեաց,
եւ այնոցիկ որ ուղիղ են
սրտիւք։
Իսկ զմիխրեալսն ՚ի չարիքս
տակաւին, տանի զնոսա
տէր ընդ այնոսիկ որ գործեն
զանօրէնութիւն. խաղաղու-
թիւն ՚ի վերայ Իսրայէլի։
Տունք և։ Գոլոցայս խ։

ՍԱՂՄՈՍ ՃԻԵ.

Օրհնութիւն ասպիճանաց։

Ի դարձուցանել տեառն
զգերութիւն սիոնի, եւ-
ղաք մեք մխիթարեալք։
Այնժամ լցան բերանք մեր
խնդութեամբ, եւ լեզուք
մեր ցնծութեամբ։
Այնժամ ասացին ՚ի հեթա-
նոսս, մեծ արար տէր առ-
նել ընդ նոսա, մեծ արար
տէր զառնել իւր ընդ մեզ,
եւ մեք եղաք բերկրեալք։
Դարձո, տէր, զգերութիւնս
մեր որպէս զուգիս ՚ի հա-
րաւոյ, որք վարեին արտա-
սուօք՝ ցնծութեամբ հնձե-
ացեն։
Երթալով երթային եւ լային,
որք բարձեալ սանեքին զսեր-
մանիս իւրեանց։
Գալով եկեսցեն եւ ցնծա-
ցեն, որք առեալ բերիցեն
զորայս իւրեանց։
Տունք զ։

ՍԱՂՄՈՍ ՃԻԶ.

Օրհնութիւն ասպիճանաց։

Եթէ ոչ տէր շինէ զտուն,
՚ի նանիր վաստակին շինողք
նորա։
Եթէ ոչ տէր պահէ զքաղաք,
ընդունայն սքնին պահա-
պանք նորա։
Ի նանիր է ձեզ յառնել կան-
խաւ. արդ արիք՝ մինչեւ էք
ննջեցեալ, եւ ցյ ուտեք լըզ-
հաց ցաւոց։
Ի ժամանակի որպէս ասցի
քուն սիրելեաց իւրոց. ժա-
ռանգութիւն տէն որդիք

են, որոյ վարձք իւր են, այն է պատուական պարգեւին իւրոյ։
Որպէս նեաւք ի ձեռս հզօրի, այնպէս են եւ որդիքն լծօ
Թաթեւոյ։
Երանի՛ որ ելից զցանկու
Թիւն իւր ի նոցանէն, մի՛ ա
մաչեսցեն՝ յորժամ խօսեա
ցին թշնամիք նոցա ընդ նոսա
առ դրանն։

Տունք գ։

ՍԱՂՄՈՍ ՃԻԲ.

Օրհնութիւն ասպիճանաց։

Երանի՛ ամենեցուն որք երկնչին ի տեառնէ, եւ գնան ի ճանապարհս նորա։
Զվաստակս ձեռաց քոց կե
րեսցես, երանի՛ ես քեզ, եւ
բարի եղիցի։
Կին քո որպէս այգի վայելուչ
յանկիւնս տան քո, որդիք քո
որպէս նորատունկ ձիթենւոց
շուրջ զսեղանով քով։
Ա՛յսպէս օրհնեցի ամենայն
մարդ որ երկնչի ի տեառ
նէ. օրհնեսցէ զքեզ տէր ի
սիովն։
Եւ տեսցես զբարութիւն Ե
րուսաղէմ զամենայն աւուրս
կենաց քոց։
Տեսցես դու զորդիս որդւոց
քոց, խաղաղութիւն ի վե
րայ Իսրայէլի։

Տունք գ։

ՍԱՂՄՈՍ ՃԻԲ.

Օրհնութիւն ասպիճանաց։

Բազում անգամ մարտեան
ընդ իս ի մանկութենէ իմ
մէ, ասասցէ Իսրայէլ։
Բազում անգամ մարտեան
ընդ իս ի մանկութենէ իմ
մէ, եւ ինձ ոչ յաղթեցին։
Զմիկունս իմ հարին վեղա
ւորք. ընդ երկար արարին
զանօրէնութիւնս իւրեանց։
Տէր արդար է, խորտակէ
զսուին մեղաւորաց։
Ամաչեսցեն եւ յետս դարձ
ցին ամենեքեան՝ որք ատեան
զսիովն։
Եղիցին նոքա որպէս խոտ
տանեաց, որ մինչեւ ի բա
ռն եկեալ՝ չորացաւ։
Ուստի ոչ եղից զբուռն իւր
հնձողն, եւ ոչ զդիրկս իւր՝
որ զորայն ժողովէր։
Ոչ ասացին ամենեքեան որք
անցանէին առ նոքօք, Թէ
օրհնութիւն տեառն ընդ
ձեզ, եւ օրհնեցաք զձեզ
յանուանէ տեառն։

Տունք ը։

ՍԱՂՄՈՍ ՃԻԹ.

Օրհնութիւն ասպիճանաց։

Ի խորոց կարդացի առ քեզ,
տէր, տէր, լուր ձայնի իմում։
Եղիցին ականջք քո՛ ի լսել
ձայն աղօթից իմոց։

Թէ զանօրէնութիւնս իմ քըն
նես, տէր, տէր, իսկ ո՞ կարէ
կալ առաջի քո, զի՛ քեն է
քաւութիւն։
Վասն անուան քո համբերի
տէր, համբեր անձն իմ բանի
քում, յուսացաւ անձն իմ
ի տէր։
Ի պահէ առաւօտուս մինչեւ
յերեկոյ, ի պահէ առաւօ
տուս յուսացաւ Իսրայէլ ի
տէր։
Ի տեառնէ է ողորմութիւն,
եւ բազում ի նմանէ է
փրկութիւն. եւ նա փրկեաց
զԻսրայէլ յամենայն նեղու
թեանց նորա։

Տունք գ։

ՍԱՂՄՈՍ ՃԼ.

Օրհնութիւն ասպիճանաց։

Տէր, ոչ բարձրացաւ սիրտ
իմ, եւ ոչ զբօսան աչք իմ։
Ոչ գնացի ես ընդ մեծամեծս,
եւ ոչ ընդ անծանիկ որ աքան
չելի եղէն քան զիս։
Բայց Թէ խոնարհեցայ ես որ
պէս մանուկ սապուցեալ
ի տանէնէ մօր իւրոյ, եւ դարձ
նորա անդրէն ի նմին։
Ա՛յլ Թէ հպարտացուսի ար
դեօք զանձն իմ, այսպէս եղիցի
հատուցումն անձին իմոյ, յու
սացաւ Իսրայէլ ի տէր յայսմ
հետէ մինչեւ յաւիտեան։

Տունք դ։ Գոբզայս լգ։

ՍԱՂՄՈՍ ՃԼԱ.

Օրհնութիւն ասպիճանաց։

Յիշեա, տէր, զդաւիթ, եւ
զամենայն հեզութիւն
նորա։
Որպէս երդուաւ տեառն,
եւ ուխտս եդ առաւծոյ
յակոբայ։
Թէ ոչ մտից ի յարկս տան
իմոյ, Թէ ելից յանկողինս
մահճաց իմոց։
Թէ տացս քուն աչաց իմոց,
կամ նինջ արտեւանաց իմոց,
կամ հանգիստ հրանաց իմոց,
մինչեւ գտից զտեղի յարկի
տեառն առաւծոյ յակոբայ։
Ահա լուաք զնմանէ յեփրա
թա, եւ գտաք զնա ի դաշտս
մայրեաց։
Մտցուք ի յարկս նորա, երե
կիր պագցուք ի տեղւոջ ուր
կացեալ են ոտք նորա։
Արի, տէր, ի հանգիստ քո,
դու եւ տապանակ կտակի
սրբութեան քո։
Երիցունք քո զգեցցին զար
դարութիւն, եւ սուրբք քո
ցնծալով ցնծասցեն։
Վասն դաւթի սիրելւոյ քո,
մի դարձուցաներ զերեսս քո
յօծելոյ քումմէ։
Երդուաւ տէր դաւթի ճշմար
տութեամբ եւ ոչ ստեաց նմա,
ի պտղոյ որովայնի քումմէ
դնեսցուք յաթոռ քո։

Թէ պահեցեն որդիք քո զօրէնս իմ, եւ զվկայութիւնս իմ զոր ուսուցից նոցա։

Որդիք նոցա նստցին յաթոռ սեանս յաւիտենից յաւիտեան։

Հաճեցաւ սէր ընդ սիան, եւ բնակեաց բնակել ՚ի նմա. սա՛ այս է հանգիստ իմ յաւիտեանս յաւիտենից, ՚ի սմա բնակեցայց զի հաճեցայ ընդ սա։

Զոքա սպառ օրհնեալ օրհնեցից, եւ զաղքատս սորա լցուցից հացիւ։

Երիցանց սորա զգեցուցից զփրկութիւն, եւ սուրբք սորա ցնծալով ցնծասցեն։

Անդ ծագեցից զեղջիւր ՚ի դաւիթ, պատրաստ արարից զճրագ օծելոյ իմոյ։

Թշնամեաց նորա զգեցուցից զամօթ, այլ ՚ի վերայ նորա ծագիցէ պսակ իմ։

Տունք ժէ։

ՍԱՂՄՈՍ ՃԼԲ.

Օրհնութիւն ասպիճանաց։

Զի բարի կամ զի վայելուչ, զի բնակեն եղբարք ՚ի միասին։

Որպէս իւղ զլխանէ ՚ի գլուխ եւ ՚ի մորուսն ահարոնի, ՚ի մորուսն լխանէ ՚ի պրտակս զգեստուս նորա։

Որպէս ցօղ զլս ցօղէ ՚ի հերմոնէ, ՚ի վերայ լերին սիոնի։

Տէր անդ պատուիրեաց զօրհնութիւն եւ զկեանսն յաւիտենից։

Տունք գ։

ՍԱՂՄՈՍ ՃԼԳ.

Օրհնութիւն ասպիճանաց։

Ահա օրհնեցէք, ամենայն ծառայք տեառն, զէր, ո կայք ՚ի տան տեառն և ՚ի գաւիթս տանս Աստուծոյ մերոյ։

Ի գիշերի համբարձէք զձեռս ձեր ՚ի սրբութիւն, եւ օրհնեցէք զէր։

Օրհնեսցէ զձեզ էր ՚ի սիանէ, որ արար զերկինս և զերկիր։

Տունք գ։

ՍԱՂՄՈՍ ՃԼԴ.

Ալէլուիա։

Օրհնեցէք զանուն տեառն, օրհնեցէք, ծառայք տեառն, զէր, ո կայք ՚ի տան տեառն եւ ՚ի գաւիթս տանս Աստուծոյ մերոյ։

Օրհնեցէք զէր՝ զի բարի է, սաղմոս ասացէք անուան նորա՝ զի քաղցր է։

Զի զյակոբ ընտրեաց իւր էր, եւ զիսրայէլ ժառանգութիւն իւր։

Ես ծանեայ՝ զի մեծ է էր, եւ էր մեծ է քան զամենայն կուռս։

Զամենայն զոր ինչ կամեցաւ՝ եւ արար էր յերկինս եւ յերկրի, ՚ի ծով եւ յամենայն խորս։

Հանէ զամպս ՚ի ծագս երկրի, զփայլատակումն իւր յանձրեւս արար, եւ հանէ զհողմս ՚ի շտեմարանաց իւրոց։

Եհար զամենայն անդրանիկս եգիպտացւոց՝ ՚ի մարդոյ մինչեւ ՚ի անասուն։

Առաքեաց զնշանս եւ զարուեստս իւր ՚ի մէջ քո, ե՛ փարաւոն, ՚ի փարաւոն եւ յամենայն զօրս իւր։

Եհար զազգս բազումս, եւ սպան զիմաստուս հզօրս։

Զսեհովն թագաւոր ամենից հայոց, զսիհոն թագաւոր բազանաւ, եւ զամենայն թագաւորսն քանանացւոց։

Եւ զերկիր նոցա ՚ի ժառանգութիւն, ժառանգութիւն իսրայէլ ժողովրդեան իւրոյ։

Տէր, անուն քո յաւիտեան, էր, յիշատակ քո ազգէ ՚ի ազգ։

Դատի էր զժողովուրդ իւր, եւ ՚ի ծառայս իւր մխիթարի։

Կուռք հեթանոսաց արծաթ եւ ոսկի են, ձեռագործք են մարդոյ մարդկան։

Բերան ունի՝ եւ ոչ խօսին, աչք են՝ եւ ոչ տեսանեն։

Ականջք են՝ եւ ոչ լսեն, եւ ոչ գոյ շունչ ՚ի բերանս նոցա։

Նմանս նոցա եղիցին որ արարին զնոսա, եւ ամենեքեան որ յուսացեալ են ՚ի նոսա։

Տուն իսրայէլի, օրհնեցէք զէր, տուն ահարոնի, օրհնեցէք զէր։

Տուն զեւեայ, օրհնեցէք զէր, երկիւղածք տեառն, օրհնեցէք զէր։

Օրհնեալ սէր ՚ի սիոնէ, որ բնակեալն է յերուսաղէմ։

Տունք ե։ Գոլոպայս կէ։

ՍԱՂՄՈՍ ՃԼԵ.

Ալէլուիա։

Խոստովան եղերուք տեառն, զի բարի է զի յաւիտեան է ողորմութիւն նորա։

Խոստովան եղերուք աստուծոյն աստուածոց, զի յաւիտեան է ողորմութիւն նորա։

Խոստովան եղերուք տեառն տերանց, զի յաւիտ.

Առաջ զբաբանչելիս մեծամեծս միայն, զի յաւիտ.

Զերկինս արուեստ խոհեմութեամբ իւրով, զի յաւիտ.

Հաստատեաց զերկիր ՚ի վերայ ջուրց, զի յաւիտ.

Առաջ զլուսաւորս մեծամեծս միայն, զի յաւիտ.

Զարեգականն արուեստ իշխանս ՚ի տուբինչեան, զի յաւիտ.

Զլուսին եւ զաստեղս լիշա-
նական դիշերոյ, զկնի յաւե.
Եհար զերկիրն եգիպտացւոց՝
անդրանիկօք խլոմբք հան-
դերձ, զկնի յաւե.
Եւ եհան զժողովուրդ իւր ի միջոյ
նորա, զկնի յաւե.
Ի ձեռն բարձր եւ ի բազուկ
իւր հզօր, զկնի յաւե.
Եհերձ զծովն մեծ եւ բա-
ժանեաց յերկուս մասունս,
զկնի յաւե.
Եւ անցոյց զժողովուրդ ընդ միջ
նորա, զկնի յաւե.
Ընկղմեաց զփարաւոն եւ զզո-
զօս իւր ի ծով կարմիր, զկնի
յաւե.
Եհան զժողովուրդ իւր յա-
նապատ, զկնի յաւե.
Եհար զազգս մեծամեծս,
զկնի յաւե.
Եւ սպան զմեծապատս հզո-
զօս, զկնի յաւե.
Զսեհովն Թագաւոր ամենից
հայոց, զկնի յաւե.
Զովգ Թագաւոր բասանոս,
զկնի յաւե.
Եւ զերկիր նոցա ի ժառան-
գութիւն, զկնի յաւե.
Ժառանգութիւն Իսրայէլի
ծառայի իւրոյ, զկնի յաւե.
Յիշեաց զմեզ սէր ի խո-
նարհութեան մերում, զկնի
յաւե.
Եւ փրկեաց զմեզ ի ձեռաց
Թշնամեաց մերոց, զկնի յաւե.
Ո տայ կերակուր ամենայն
կենդանեաց, զկնի յաւե.
Խոստովան եղերուք աստու-
ծոյն երկնաւորի, զկնի յաւե.

Տունք իզ։

ՍԱՂՄՈՍ ՃԼԶ.

Սաղմոս ի Դաւիթ. ի յետն Երեմիայ. աննշան
յԵբրայեց-ոյն։

Սր գետս բաբելացւոց՝ անդ
նստեաք եւ լացաք, որպէս
յիշեցաք մեք անդ զսիան։
Ի միջ ուռենաց նոցա կախե-
ցաք գիտակարանս մեր։
Անդ հարցանէին գերիչք մեր
զբանս օրհնութեան, գերե-
վարք մեր ասէին զմեզ և
ասէին։
Օրհնեցէք զմեզ յօրհնու-
թենէն սիովն. իսկ զկնի
օրհնեացուք զօրհնութիւնս
աւետն յերկիր օտար։
Եթէ մոռացայց գքեզ, երու-
սաղէմ, մոռացի զիս աջ իմ։
Կցեսցի լեզու իմ ի քիմն
իմ՝ եթէ ոչ յիշեցից գքեզ,
եթէ ոչ նախ նուագեցից զը-
քեզ, երուսաղէմ, սկիզբն
ուրախութեան իմոյ։
Յիշեա, տէր, զորդիսն եդոմ
մոյ՝ յաւուրսն երուսաղէմի։
Որ ասէին, քակեցէք քա-
կեցէք, մինչեւ ի հիմն հա-
ստուցէք։
Դուստր բաբելացւոց թշուա-
ռական, երանի՛ որ հատուցէ

զհատուցումն քո զոր դու-
մեզ հատուցեր։
Երանի՛ որ կալցէ զմանկունս
քո եւ եհար զքարի։

Տունք ժ։

ՍԱՂՄՈՍ ՃԼԷ.

Սաղմոս ի Դաւիթ։

Խոստովան եղէց քեզ, տէր,
բոլորով սրտիւ իմով, առաջի
հրեշտակաց սաղմոս ասացից
քեզ։
Զի լսեր զբանս բերանոյ իմ-
մոյ, երկիւղ պատկոյ ի տաճար
սուրբ քո, և խոստովան եղէց
անուան քումմ վասն ողոր-
մութեան եւ ճշմարտու-
թեան քո։
Մեծ արարեր յաւելուածկի զա-
նուն սուրբ քո. յորում օ-
րում կարդամ առ քեզ վաղ
վաղակի լուր լինի, եւ բա-
զում արասցես զօրութիւնս
յանձն իմ։
Խոստովան եղիցին առ քեզ
ամենայն թագաւորք երկրի,
զի լսեան զբանս բերանոյ
քո, եւ օրհնեսցեն զճանա-
պարհս քո։
Մեծ են փառք տեառն,
բարձր է տէր՝ զանարհս տե-
սանէ, զբարձունս ի հեռաս-
տանէ ճանաչէ։
Թէ գնացից ես ի միջ նեղու-
թեանց, կեցուսցես զիս ի
բարկութենէ թշնամեացն։

Զգեցեր զձեռն քո եւ փրկ-
եաց զիս աջ քո, եւ տէր
հատուսցէ ընդ իմ։
Տէր, ողորմութիւն քո յաւի-
տեան, զգործս ձեռաց քոց
մի անտես առնէր։
Տունք ը։ Գարշայս խգ։

ՍԱՂՄՈՍ ՃԼԸ.

Ի կատարած. Սաղմոս ի Դաւիթ։

Տէր, փորձեցեր զիս եւ ծա-
նեար զիս, դու ծանեար
զնստել իմ եւ զյառնել իմ։
Ի միտ առեր զխորհուրդս իմ
ի հեռաստանէ, զբաւիղս իմ
եւ զվիճակս իմ դու քննեցեր,
եւ զամենայն ճանապարհս իմ
յառաջագոյն տեսեր, զի ոչ
գոյ նենգութիւն ի լեզուի
իմում։
Սհա դու, տէր, ծանեար զնե-
րին իմ եւ զառաջին իմ, դու
ստեղծեր զիս եւ եդիր զձեռն
քո ի վերայ իմ։
Սքանչելի եղեւ գիտութիւն
քո ինձ, զօրացաւ եւ ոչ
հանդարտեմ սմա։
Յո երթայց ես յոգւոյ քումմէ,
կամ յերեսաց քոց ես
յո փախեայց։
Թէ ելանեմ յերկինս՝ դու անդ
ես, թէ իջանեմ ի դժոխս՝
եւ անդր մօտ ես։
Թէ առնոյ զվիճակս իմ ընդ

առաւօտս, եւ բնակեցայց յեղերս ծովուս։
Սակայն եւ անդ ձեռն քո առաջնորդեսցէ զիս, եւ աջ քո ընկալցի զիս։
Ասացի, խաւար ուրեմն արգելօք ծածկեսցէ զիս, կամ գիշեր փոխանակ լուսոյ փաթաթեսցի։
Խաւարն ի քէզ ոչ խաւարանայ, եւ գիշերն որպէս ցերեկոյ լուսաւոր եղիցի, եւ խաւար նորա որպէս զլոյս նորա։
Դու առացար զերիկամունս իմ եւ ընկալար զիս յորովայնէ մօր իմոյ։
Խոստովան եղէց քեզ, տէր, զի ահեղ եւ սքանչելի եմ. սքանչելի են գործք քո, եւ անձն իմ միսեաց յոյժ։
Ոչ թաքեաւ ոսկր իմ ի քէն զոր արարեր ի ծածուկ, եւ կար զօրութեան իմոյ ընդ առնիւն երկրի։
Զանգործս իմ աչք քո, եւ ի գիրս քո ամենեքեան գրեցան։
Ի տուէ մոլորեցան, եւ ոչ ոք էր որ առաջնորդէր նոցա։
Ինձ յոյժ մեծարեալ եղեն բարեկամք քո, աստուած, եւ յոյժ զօրացան իշխանք նոցա։
Թուեցի զնոսա եւ քան զաւազ բազմացան. զարթեայ եւ արդ ընդ քեզ եմ։

Թէ ապանանես զմեզաւորս, աստուած, արք արեան, ի բաց եղերեալք կենդանեաց։
Ի հակառակութիւն եւ ի նախանձ, ասացեն ի նանիր զքաղաքս քո։
Զաւելս քո, տէր, առեալ, եւ ի վերայ թշնամեաց քոց մաքեցայ։
Ատեցաւ կատարեալ ատեամբ զնոսա, եւ եղեն ինձ ի թշնամիս։
Փորձեա զիս, աստուած, եւ ծանիր զսիրտ իմ, քննեա զիս եւ ծանիր զշաւիղս իմ. եւ տես թէ իցէ անօրէնութիւնք ի ճանապարհս իմ, եւ առաջնորդեա ինձ ի ճանապարհս քո յաւիտենից։

Տուն իբ։

ՍԱՂՄՈՍ ՃԼԹ.

Ի կատարած. Սաղմոս ի Դաւիթ։

Ապրեցո զիս, տէր, ի մարդոյ չարէ, յառնէ անիրաւէ փրկեա զիս։
Խորհեցան զանօրէնութիւն ի սիրտս իւրեանց, զօր ամենայն պատերազմեցան ի պատերազմ։
Սրեցին զլեզուս իւրեանց որպէս զօձի, եւ թոյնք իժից ի նեղբոց շրթանց նոցա։
Պահեա զիս, տէր, ի ձեռաց մեղաւորի, եւ ի մարդոյ չարէ փրկեա զիս։

Խորհեցան խափանել զգնացս իմ, թաքուցին ամբարտաւանք որոգայթ ինձ։
Եւ զպարս որոգայթի ոսկից իմոց, շուրջ զշաւիղս իմով եդին ինձ գայթակղութիւն։
Ասացի, տէր աստուած իմ ես դու, ունկն դիր, տէր, ձայնի աղօթից իմոց։
Տէր, տէր զօրութիւն փրկութեան իմոց, հովանի գլխոյ իմոյ յաւուր պատերազմի։
Մի մատներ զիս, տէր, ի ցանկութիւն մեղաւորացն. զի խորհեցան վասն իմ, մի լքես զիս։
Զի մի երբեք բարձրասցին, եւ խորհուրդք նոցա մի կատարեսցին. վախճան կատարած նոցա վաստակ շրթանց իւրեանց ծածկեսցէ զնոսա։
Արկցես ի վերայ նոցա կայծակունս հրոյ, եւ կործանեսցես զնոսա. ի տառապանսց մի կարասցեն կենալ։
Մարդ լեզուանոյ մի յաջողեսցի ի վերայ երկրի, զայր մեղաւոր չարիք իւր որսասցեն ի կորուստ։
Ծանեայ զի առնես, տէր, դատաստան աղքատի եւ իրաւունս անանկի։
Արդարք գոհասցին զանուանդ քում, բնակեսցեն ուղիք առաջի երեսաց քոց։

Տուն իգ։

ՍԱՂՄՈՍ ՃԼԵ.

Սաղմոս ի Դաւիթ։

Տէր, կարդացի առ քեզ եւ լուր լիր ինձ, նայեաց ի ձայն աղօթից իմոց ի կարդալ իմում առ քեզ։
Ուղիղ եղիցին աղօթք իմ որպես խունկ առաջի քո, տէր, համբարձումն ձեռաց իմոց պատարագ երեկոյի։
Դիր, տէր, պահապան բերանոյ իմոյ, եւ դուռն ամուր շրմանց իմոց, զի մի խոտորեսցի սիրտ իմ բանիս չարութեան։
Ի պատճառել զպատճառս մեղաց ընդ մարդս որ գործեն զանօրէնութիւնս. ոչ եղէց կցորդ ընտրելեաց նոցա։
Խրատեսցէ զիս արդարն ողորմութեամբ եւ յանդիմանեսցէ զիս. իւղ մեղաւորի մի օծցէ զգլուխ իմ, եւ աղօթք իմ ի կամս նորա։
Արփեան մերձ առ վիմին դատաւորք նոցա, լուիցեն բանից իմոց եւ քաղցրասցին։
Որպէս թանձրութիւն հողոյ զի սփռեալ է ի վերայ երկրի ցրուեսցին ոսկերք նոցա մերձ ի դժոխս։
Առ քեզ, տէր, տէր, են աչք իմ, ի քեզ յուսացայ, մի հաներ զհոգի իմ։
Պահեա զիս յորոգայթէ որ թաքուցան ինձ, ի պայթակ-

զաւթիեանէ՝ այլ զոլծեն զաշխատաւթիւն։

Անկանին ի ցանցս նորա մեղաւորք, մինչդեռ եմ ես մինչ չեւ անցից։

Տուն ք ժ։

ՍԱՂՄՈՍ ՃԽԱ.

Խոստովանի ի Դաւիթ. աղօթ, ի ժամանակի ջէ էր նա յայրէ անդ։

Ձայնիւ իմով ես առ տէր կարդացի, ձայնիւ իմով զտէր աղաչեցի։

Սփռեցից առաջի նորա զաղօթս իմ, եւ զնեղութիւնս իմ առաջի նորա պատմեցից։

Ի նաւատել յինէն հոգւոյ իմոյ, դու, տէր, ծանեար ըզշաւիղս իմ, ի ճանապարհ յոր եւ գնայի ծածուկ թակարդ լինէր ինձ պրպտեալ։

Հայեի յաջմէ եւ տեսանէի, եւ ոչ ոք էր որ ճանաչէր զիս. կորեաւ յինէն փախուստ իմ, եւ ոչ դատ խնդրոյ անձին իմոյ։

Աղաղակեցի առ քեզ, տէր, եւ ասացի, դու ես յոյս եւ բաժին իմ յերկրին կենդանեացս։

Լսայեա, տէր, յաղօթս իմ, զի ես խոնարհ եղէ յոյժ. ապրեցո զիս ի հալածչաց իմոց, զի հզօր եղեն քան զիս։

Տէր, հան ի բանտէ զանձն իմ, գոհանալ զանուանդ քումմէ։

Եւ քեզ սպասեն արդարք, մինչեւ հատուցանես։

Տուն ք։ Գորզայա ծգ։

ՍԱՂՄՈՍ ՃԽԲ.

Սաղմոս ի Դաւիթ, ի ժամանակի զի հալածեաց զնա Աբիսողոմ որդի նորա։

Տէր, լսեր ողորմի իմոյ, առնեն դիմ խնդրուածոց իմոց ճշմարտութեամբ քոյ։

Լուր ինձ արդարութեամբ քոյ, եւ մի մտաներ ի դատաստան ընդ ծառայի քում, զի ոչ արդարանայ առաջի քո ամենայն կենդանւոյ։

Հալածեաց թշնամին զանձն իմ, խոնարհ արար յերկիր զկեանս իմ, եւ նստոյց զիս ի խաւարի որպես մեռեալ յաւիտենից։

Զանձկացաւ յիս հոգի իմ, եւ սիրտ իմ խռովեցաւ յիս։

Յիշեցի զաւուրսն զառաջինս, խորհեցայ յամենայն ի գործս քո. յարարածս ձեռաց քոց խորհեցայ, եւ համբարձի առ քեզ զձեռս իմ։

Անձն իմ որպես զերկիր ծարաւի է առ քեզ. վազվազակի լուր ինձ, տէր, զի նաւատեաց յինէն հոգի իմ։

Մի դարձուցաներ զերեսս քո յինէն, նմանիցեմ այնոցիկ որ իջանեն ի գուբ։

Լսել ինձ առաւօտուց զողորմութիւնդ քո, զի ես ի քեզ, տէր, յուսացայ։

Ցոյց ինձ ճանապարհ յոր գնացից, զի առ քեզ, տէր, համբարձի զանձն իմ։

Փրկեա զիս ի թշնամեաց իմոց, տէր, զի զքեզ ապաւէն ինձ արարի։

Ուսո ինձ առնել զկամս քո, զի դու ես աստուած իմ։

Հոգի քո բարի առաջնորդեսցէ ինձ ի երկիր ուղիղ։

Վասն անուան քո, տէր, կեցուսցես զիս. արդարութեամբ քով հանցես ի նեղութենէ զանձն իմ։

Ողորմութեամբ քով սատակեսցես զթշնամիս իմ, եւ կորուսցես զամենայն նեղիչս անձին իմոյ, զի ես ծառայ քո եմ։

Տուն ք ժգ։

ՍԱՂՄՈՍ ՃԽԳ.

Սաղմոս ի Դաւիթ, առ Գողիաթ։

Օրհնեալ տէր աստուած իմ, որ ուսոյց զձեռս իմ ի պատերազմ, եւ զմատունս իմ ի ճակատամարտս։

Ողորմութիւն իմ եւ ապաւէն իմ, օգնական իմ եւ փրկիչ իմ. ապաւէն իմ, եւ ես յուսացայ ի նա. ո հնազանդ առնէ զժողովուրդս ընդ ինեւս։

Տէր, ոմն է մարդ զի յայտնես եղար դու նմա, կամ որդի մարդոյ՝ զի համարիս ինչ զնա։

Մարդ նմանութեան նման նեաց, եւ աւուրք նորա որպես հովանի անցին։

Տէր, խոնարհեցո զերկինս և էջ, մերձեաց ի լերինս՝ եւ ծխեսցին։

Փայլատակեա զփայլատակումն քո եւ խռովեա զնոսա, առաքեա զնետս քո եւ ցրուեա զնոսա։

Առաքեա զձեռն քո ի բարձանց եւ փրկեա զիս ի ջուրց բազմաց, եւ ի ձեռաց որդւոց օտարաց։

Որոց բերանք խրեանց խօսեցան զնանրութիւն, եւ աջ նոցա աջ է մեղաց։

Աստուած, յօրհնութիւն նոր օրհնեցից զքեզ, տաւնակեաւ սաղմոսարանաւ սաղմոս ասացից քեզ։

Ո տացէ զփրկութիւն Թագաւորաց մերոց, որ փրկեսցէ զՏաւիթ ծառայ իւր ի սրոյ չարէ։

Փրկեա զիս եւ ապրեցո զիս ի ձեռաց որդւոց օտարաց։

Որոց բերանք խրեանց խօսեցան զնանրութիւն, եւ աջ նոցա աջ է մեղաց։

Որոց ուստերք խրեանց որպես նորատունկ հասուսատուն են ի մանկութենէ

խրեանց, զաւերք նոցա զարդարեալ եւ պաճուճեալ ՚ի նմանութիւն տաճարի:

Շուրմարանք նոցա լի են եւ բղխեն ՚ի միմեանս, խոշիւնք նոցա բազմածիւք են և բազմանան ՚ի գնացս խրեանց, և անդեայք նոցա պարարաք են:

Ոչ գոյ խրամատութիւն ցանկոյ նոցա, եւ ոչ սպառազէն ՚ի հրապարակս նոցա:

Այլ երանելոյ ժողովրդեան՝ որոյ այս այսպէս է. նա՝ եւ բանի՛ ժողովրդեան՝ որոյ աէր աստուած է նոցա:

Տունք ժզ:

ՍԱՂՄՈՍ ՃԽԴ.

Օրհնութիւն ՚ի Դաւիթ:

Բարձր առնեմ զքեզ, աստուած իմ եւ թագաւոր իմ, և օրհնեմ զանուն քո յաւիտեան եւ յաւիտեանս յաւիտենից:

Զօրհանապազ օրհնեցից զքեզ, եւ գովեցից զանուն քո յաւիտեան եւ յաւիտեանս յաւիտենից:

Մեծ է աէր եւ օրհնեալ է յոյժ, եւ մեծութեան նորա ոչ գոյ քաւ:

Աղք եւ աղք գովեսցեն զգործս քո, և զզօրութիւնս քո պատմեսցեն:

Զմեծավայելչութիւն փառացդ պըծութեան քո խօսեսցին, և զքանչելիս քո պատմեսցեն:

Զզօրութիւն ահի քո ասասցեն, եւ զմեծութիւնս քո պատմեսցեն:

Զյիշատակ բազում քաղցրութեան քո բղխեսցեն, և արդարութեամբ քո ցնծասցեն:

Գթած ողորմած է աէր, երկայնամիտ եւ բազումողորմ:

Քաղցր է աէր առ ամենեսեան, եւ գթութիւն նորա ՚ի վերայ ամենայն արարածոց իւրոց:

Խոստովան եղիցին առ քեզ, աէր, ամենայն գործք քո, և սուրբք քո օրհնեսցեն զքեզ:

Զփառս պքրայութեան քո ասասցեն, եւ զզօրութիւնս քո պատմեսցեն:

Ճանաչել որդւոց մարդկան զզօրութիւնս քո. եւ զփառս մեծվայելչութեան պքրայութեան քո:

Պքրայութիւն քո պքրայութիւն ամենայն յաւիտենից, եւ տէրութիւն քո ազգէ ազգի եւ յազգ:

Հաւատարիմ է աէր յամենայն ՚ի բանս իւր, եւ պատուական է յամենայն ՚ի գործս իւր:

Հաստատէ աէր զամենայն պարձակեալս, եւ կանգնէ զամենայն վշտացեալս:

Աչք ամենեցուն ՚ի քեզ յուսան, եւ դու տաս կերակուր նոցա ՚ի ժամու:

Տաս դու նոցա եւ կերակրին, բանաս զձեռն քո, եւ լցուցանես զամենեսեան քաղցրութեամբ կամաց քոց:

Արդար է աէր յամենայն ճանապարհս իւր, եւ սուրբ է յամենայն ՚ի գործս իւր:

Մերձ է աէր առ ամենեսեան որ կարդան առ նա, առ ամենեսեան որ կարդան առ նա ճշմարտութեամբ:

Զկամս երկիւղածացդ իւրոց առնէ աէր, ազօթից նոցա լսէ եւ կեցուցանէ զնոսա:

Պահէ աէր զամենեսեան զսէր սիրեն զնա, եւ զամենայն մեղաւորս սատակէ աէր:

Զօրհնութիւնս աեառն խօսեսցի բերան իմ. օրհնեսցէ ամենայն կենդանի զանուն սուրբ նորա յաւիտեան, եւ յաւիտեանս յաւիտենից:

Տունք իբ: Գարձեալ ծբ:

ՍԱՂՄՈՍ ՃԽԵ.

Ալէլուիա. Անգեայ և Զաքարիայ

Օրհնեա, անձն իմ, զտէր. օրհնեցից զտէր ՚ի կեանս իմ, ազաղմս ասացից աստուծոյ իմոյ մինչեւ եմ ես:

Մի յուսայք յիշխանս՝ յորդիս մարդկան, զի ոչ գոյ փրկութիւն ՚ի նոսա:

Ելցէ հոգի ՚ի նոցանէ՝ եւ դարձցին անդրէն ՚ի հող, եւ յայնմ աւուր կորիցեն ամենայն խորհուրդք նոցա:

Երանի ազգի որոյ աէր աստուած յակոբեայ օգնական է նմա, եւ յոյս նորա ՚ի աէր աստուած է:

Որ արար զերկինս եւ զերկիր, զծով եւ զամենայն որ է ՚ի նոսա:

Որ պահէ զճշմարտութիւն յաւիտեան, եւ առնէ իրաւունս զրկելոցդ:

Տայ հաց քաղցելոց, եւ արձակէ զկապեալս աէր:

Տէր բանայ զաչս կուրացդ, և կանգնէ զգլորեալս աէր:

Տէր սիրէ զարդարս, աէր պահէ զպանդուխտս. զորբս եւ զայրիս ընդունի աէր, եւ զճանապարհս ամպարշտացդ կորուսանէ:

Թագաւորեսցէ աէր յաւիտեան աստուած քո, սիան, ազգէ մինչեւ յազգ:

Տունք ժ:

ՍԱՂՄՈՍ ՃԽԶ.

Ալէլուիա. Անգեայ և Զաքարիայ

Օրհնեցէք զտէր՝ զի բարի են սաղմոսք. աստուածոյ մերում քաղցր եղիցի օրհնութիւն:

Շինէ զերուսաղէմ տէր, եւ զգլուեալսն իսրայէլի ժողովէ:

Բժշկէ զբեկեալ սիրտս, եւ պատէ զամենայն վէրս նոցա:

Ո թոռէ զաղմուխիւն առ
տեղայ, եւ զամենեսեան
զնաս յանապանէ կոչէ։
Մեծ է տէր մեր եւ մեծ է
զօրութիւն նորա, խնաստու-
թեան նորա ոչ պոյ բաւ։
Ընգունի զհեզս տէր, եւ
խոնարհ առնէ զամբար-
տաւանս մինչեւ յերկիր։
Օրհնեցէք զտէր խոստով-
նութեամբ, սաղմոս ասացէք
նմա օրհնութեամբ։
Զգեցոյց զերկինս ամպով,
պատրաստ արար զանձրեւ
իւր յերկիր։
Բուսոյց զխոտ ի լերինս,
զդալար ի ծառայութիւն
մարդկան։
Ա՛ն որ տայ անասնոց զկերա-
կուր իւրեանց, ձագուց ագ-
ռաւուց՝ որ կարդան առնա։
Ոչ ի թէ ընդ զօրութիւնս ձիոյ
կամեցաւ տէր, եւ ոչ ընդ ե-
րանս առն սկայի հաճեցաւ։
Ա՛յլ հաճեցաւ տէր ընդ եր-
կիւղածս իւր, եւ ընդ այնո-
սիկ որ յուսան յողորմու-
թիւն նորա։

Տունք ԺԲ։

ՍԱՂՄՈՍ ՃԽԷ.

Ալէլուիա. Անգեայ Ե Զաքարիայ։

Գովեա, երուսաղէմ, զտէր։
Եւ օրհնեա զաստուած քո,
սիոն։

Զի զօրացոյց զնիգս դրանց
քոց, եւ օրհնեաց զորդիս
քո ի քեզ։
Ո եղ զսահմանս քո ի խա-
ղաղութիւն, պարարտու-
թեամբ յորենոյ լցոյց զքեզ։
Առաքէ զբան իւր յերկիր,
վազվազ ընթանայ պատ-
գամք նորա։
Դնէ զձիւն որպէս զսպր, եւ
զմէգ որպէս փոշի ցանեաց։
Արկանէ զսառն որպէս պա-
տառս, առաջի ցրտոյ նորա
ո՞ կալցի կալ։
Առաքէ զբան իւր եւ հալէ
զնոսա, շնչեսցէն հողմք եւ
գնասցեն ջուրք։
Պատմէ զբան իւր յակոբայ,
զարդարութիւն և զիրաւու-
նս իւր իսրայէլի։
Ոչ այսպէս արար ամենայն
ազգաց տէր, եւ զդատաս-
տանս իւր ոչ յայտնեաց նոցա։

Տունք ԺԱ։ Գոլզայս լԲ։

ԱՂՕԹՔ ԱՄԲԱԿՈՒՄԱՑ ՄԱՐԴԱՐԻՒ

Ա՛ՐՔԱԿ. Գ.

Տէր, զբաւ քո լսեայ եւ
երկեայ. տէր, նայեցայ
ի գործս քո և զարհուրեցայ։
Ի մէջ երկուց կենդանեացն
ծանեցիս դու, ի յերեւեալ
ամանն յայտնեացիս, եւ ի
հասանել ժամանակին ե-
րեւեցիս։

Ի խոտել անձին իմոյ ի ժա-
մանակի բարկութեան, զո-
ղորմութիւն յիշեացես։
Աստուած ի հարաւոյ եկեսց
ես, եւ սուրբն ի փառան
լեռնէ։
Ծայանեսցեն երկինք զվայելչ
առնութիւն փառացդ նորա, եւ
օրհնութեամբ նորա լցան
տիեզերք։
Ճառագայթք որպէս զլուսոյ
հասան ի նմանէ, եւ եղջիւրք
ի ձեռին նորա գոան. եւ
անդ հաստատեցաւ զօրու-
թիւն փառացդ նորա։
Յերեսաց նորա երթիցեն հա-
րուածք, եւ զհետ շառագայ
նորա երթիցեն մեծամեծք
ի թռչնոյ։
Եկայց՝ եւ չափեաց զերկիր.
հայեցաւ՝ եւ դիտեաց զհե-
թանոսս։
Լերինք հալեսցին և անդառք
վաներեսցին. ճանապարհք՝
որք ի սկզբանէն էին, կո-
րացին. եւ ի նմանէ դողաս-
ցէ ամենայն երկիր։
Տեսի զբանակս քուշացւոց.
խռովեցան բնակիչք վրանա-
ցըն մադիամու։
Միթէ ի վերայ գետոց բար-
կացաւ դու, տէր, կամ սըրտ-
մութիւն քո ի վերայ գե-
տոց, կամ բարկութիւն քո
ի վերայ ծովու։
Երեր դու ի կառս քո, հե-
ծելազինդ քո փրկութիւն
եղեւ յերանելն քո։
Զարթեաւ աղեղն քո, զնեաս
կապարճից քոց արբեցուցեր,
գետս յրուեցեր, զերկիր
դաղացուցեր ի սաստկութե-
նէ անձրեւի, որք անցանեն
ընդ սա։
Անգունդք ազազակեցին ձե-
ռամբս, լոյս փայլման արե-
գականն արդելաս, եւ ծա-
գումն լուսնին գադարեաց։
Որպէս ի նշոյլս սլաքաց քոց
գնասցեն, եւ որպէս ի լոյս
փայլատակման սրոյ քո։
Բարկութեամբ զարթիցես ի
վերայ երկրի և գողութեամբ
կասցես զհեթանոսս։
Երեւեցար ի փրկութիւն
ժողովրդեան քո, ի փրկել
զընտրեալս քո։
Եհատաճիպ եղեր ի գլուխս
մարդկան ամբարտաւանից.
մինչեւ յանդունդս ծովու
ընկղմեցան։
Խնդրեցեր զվէրժ զօրու-
թեամբ քով ի զօրագլխացն
մեղաւորաց, որք յուսացեալ
էին ի յանդգնութիւնս իւ-
րեանց, զի կերիցեն զաղքատն
ի գաղտնիս։
Առաքեցեր ի վերայ ծովու
զերիվարս քո. խռովեցան
յորդի ջուրք անդնդոց։
Կացի ես՝ եւ գետն ազիք իմ
ի ձայնէ բերանոց իմոց. եմուտ

դալումն յսակեցա իմ, եւ ես յանձն իմ խոովեցայ։
Զայս պահեցից յաւուր նեղութեան, ածել՝ի վերայ ազգի պղծ մարանէիցն ընդ ժողովելոցդ քումն։
Թշնեմն ոչ ասացէ զպատուհասս իւր, եւ յայտնող բերս մի գայցէ. ձիմեռնիք անասցին, եւ երկիր մի բուսուսցէ զղալարի։
Պահասեցին հօտք՝ի ճարակաց, եւ եղինք մի գայցին առ ժուռս։
Ես՝ի սէր յուսացայ, ցնծացայց եւ ուրախ եղէց յաստուած փրկիչ իմ։
Տէր սէր ես ինձ զօրութիւն, և կացոյց զոտս իմ՝ի հաստատութեան. ՚ի վերայ պարանոցի թշնամեացն կացոյց զիս եւ հանդոյց զիս երազ երազ։
Փառք Հօր եւ որդւոյ եւ.

Ա. յս սաղմոս ինչնագիրք Դաւթի արտաքոյ լռոց։ Ի ձեռնադիր՝ զի եւ նա հակապակ ընդդէմ Գողիաթայ առաջի Սաուղի։

Փոքր էի ես յեղբարս իմ, եւ կրտսեր՝ի տան հօր իմոյ. արածէի զհաւիկն հօր իմոյ։
Ձեռք իմ արարին սաղմոսս, եւ մատունք իմ կազմեցին դործի օրհնութեան։
Իսկ արդ ո՞ պատմեսցէ ցայս աեառն իմում. ինքն աէր ամենայնի՝ լսելոյ զամենայնի։
Որ առաքեաց զհրեշտակ իւր, եւ համբարձ զիս՝ի հօտ աէր իմոյ, եւ օծ զիս իւղով օծմանն իւրոյ։
Եղբարք իմ մեծամեծք եւ գեղեցիկք, եւ ոչ հաճեցաւ ընդ նոսա աէր։
Ելի ես ընդ առաջ այլազգւոյն, եւ նզովեցի զկուռս նորա. Հանի զսուսերն՝ի նմանէ եւ հատի զգլուխ նորին, եւ բարձի զնախատինս յորդւոցն իսրայելի։
Փառք Հօր եւ որդւոյ եւ.

Մ Ա. Ղ Թ Ա. Ն Ս

Լաւ մեզ, տէր, լաւ մեզ առաւածային ողորմութեամբ եւ գթութեամբ քո խնայեա յարարածս քո։
Մարդասէր տէր, զոնի ընդ բուհոյ անապատի մօր քո եւ կաւէ, եւ զոնի խաչի քո պատուականի, ընկալ զաչխատս մեր եւ կեցո զմեզ։

Գարոզ և Աղօթք՝ Ողորմեա և Ի նեղութեան կանոնաց։

Վասն գոհանալոյ մեզ զնորա հոգի եւ զողորմութիւն՝ի բարերար առաւելութենէ մերմէ՝ ընդ տէր աղաչեսցուք։
Տէր ողորմեա։

Վասն փրկելոյ զմեզ՝ի ղերապատուհասէ մարդկան եւ յորոգայթից սատանայի՝ ընդ տէր աղա.
Վասն առնելոյ անձանց քրիստոնէից եւ տանց հաւատացելոց՝ զտէր աղա.
Վասն որք՝ի լերինս յայրս եւ՝ի փոսորս բնակեալ են տուրք հարքն մեր՝ զտէր աղա.
Վասն որք սաղմոսիք և օրհնութեամբ կատարեն զամենայն ժամանակս կենաց իւրեանց՝ զտէր աղա.
Վասն հոգւոցն հանգուցելոց որք ճշմարիտ եւ ուղիղ հաւատով՝ի քրիստոս ննջեցին՝ զտէր աղա.
Եւ եւս՝ վիրաբան վասն ճշմարիտ եւ տուրք հաւատոյս մերոյ՝ զտէր աղա.
Զանձինս մեր եւ զմիմեանս առաւն աստուածոյ առնեսցուք։
Քեզ առաւնդ յանձն եղիւ.
Ողորմեայ մեզ, տէր աստուած մեր, ըստ մեծի ողորմութեան քումմ. աստացուք առնելոցդ քեան միաբանութեամբ։
Տէր ողորմեա. տէր ողորմեա. տէր ողորմեա։

Աղօթք։

Գոհանամք զքեզն, տէր աստուած մեր, որ զարթուցեր զմեզ՝ի հանգստեան քնոյ չնորհիւ ողորմութեան քո։ Զարթո զմիտս մեր արդարութեամբ առ քեզ, տէր աստուած մեր, զի տեսցեն աչք մեր զփրկութիւն քո։ Եկեսցէ եւ բնակեսցէ առ մեզ աստուածութիւն քո, եւ ողորմեսցի քո Հոգին եւ պահպան լինի՝ի վերայ պաշտօնէից քոց։ Եւ զմեզ զծառայս քո արժանի արա՝ի տալ եւ՝ի դիշերի եւ յամենայն ժամու միշտ խորհիլ՝ի սէր պատուիրանաց քոց։ Եւ գոհութեամբ փառաւորել զՏայր եւ զորդի եւ զսուրբ Հոգի, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Խաղաղութիւն ամենեցուն։
Աստուծոյ երկիւղածութիւն։

Վեղ անարատ զօրութիւն եւ ազնիւ անմահութեան դու ես, քրիստոս աստուած փրկիչ մեր։ Որ չնորհեցեր մեզ՝ի միջ դիշերի յառնել եւ խոստովան լինիլ առ քեզ վասն իրաւանց եւ արդարութեան քո։ Եւ այժմ ազաչեմք զքեզ, տէր աստուած մեր, արա զմեզ արժանս եւ պատրաստս՝ի ժամ առաւօտու ընդ առաքինութիւն քո։ Եւ ընդ նոսին գոհանալով փառաւորել զքեզ

ընդ հօր եւ ընդ սուրբ հոգ-
ւոյդ, այժմ եւ միշտ եւ
յաւիտեան յաւիտենից.
ամէն։

Մաղթանք։

Գոհութեամբ եւ ճշմարիտ
խոստովանութեամբ անպա-

դար փառաւորեմք զՀայր եւ
զորդի եւ զսուրբ հոգիդ
այժմ եւ միշտ եւ յաւի-
տեան յաւիտենից. ամէն։

Օրհնեալ տէր մեր յիսուս
քրիստոս. ամէն։

Հայր մեր որ յերկինս։

ԺԱՄԱԳԻՐՔ

ՈՐ Է

ԿԱՐԳԱԻՈՐՈՒԹԻՒՆ ՀԱՍԱՐԱԿԱՑ ԱՂՕԹԻՑ
ԵՒ ԺԱՄԵՐԳՈՒԹԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ
ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՑ
Ա.ՐԱ.ՐԵԱԼ ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆԶԱՑՆ ՄԵՐՈՑ
ՍԱՀԱԿԱՑ ԵՒ ՄԵՍՐՈՊԱՑ
ԵՒ
ԵՐԱՆԵԼԻ ՀԱՅՐԱՊԵՏԱՑՆ ՄԵՐՈՑ
ԳԻՒՏՈՑ ԵՒ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԱՆԴԱԿՈՒՆԻՈՑ
ԵՒ
ՍՐԲՈՑՆ ՆԵՐՍԻՍԻ ՇՆՈՐՀԱԼԻՈՑ
Ի ՓԱՌՍ ԱՄԵՆԱՍՈՒՐԲ ԵՐԲՈՐԴՈՒԹԵԱՆ
ՀՕՐ ԵՒ ՈՐԴՒՈՑ ԵՒ ՀՈԳՒՈՑՆ ՍՐԲՈՑ



ՏՊԱՐԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԱԹՈՌՈՑ
ՍՐԲՈՑ ՅԱԿՈԲԵԱՆՑ
ՅԵՐՈՒՍԱՂԷՄ

ՌՅԿԴ = 1364
1915

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

Տ. Տ. ԳԷՈՐԳԱՅ Ե.

ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՍԱՑՔ ՀԱՅՈՑ

Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ Ս. ԵՐՈՒՍԱղԵՄԻ

Տ. ՅԱՐՈՒԹԻՒՆ

ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔ-ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ԵՒ

Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ

Տ. ՋԱՒԷՆԻ

ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔ-ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ՀՐԱՀԱՐՈՒՄՆ

ՀՐԱՀԱՐՈՒՄՔ ՝ի սատանայ՝ եւ յամենայն խաբեբայէ նորա, ՝ի պատրաստից նորա, ՝ի խորհրդոց նորա, ՝ի գնացից նորա, ՝ի չար կամաց նորա, ՝ի չար հրեշտակաց նորա, ՝ի չար պաշտօնէից նորա, ՝ի չար կամաց նորա, եւ յամենայն չար զօրութենէ նորա՝ հրաժարեալ հրաժարիմք։

Զայս երէց՝ երիցն՝ երէս ՝ի յարե-մտից և յեր-ս ՝ի կր ո-նելով, և ապա դառնայ յարե-ելը. և ասէ՝ ընդ-ա-ռի-ւն ո-ղջոյ-ս հա-ւատոյ, բացագլե-ս և յեռանած ձերդի-, և ասէ

Խոստովանիմք և հաւատամք ամենակատար սրտիւ զՀայրն սատուած՝ անեղ, անծին, եւ անակիզըն. այլ եւ ծնող որդւոյ եւ բղխող Հոգւոյն սրբոյ։ Հաւատամք զբանն սատուած, անեղ՝ ծնեալ՝ եւ ակեալ ՝ի հօրէ նախ քան զյաւիտեանս եղեալ, ոչ յետոյ եւ ոչ կրտսեր, այլ սրբեան Հայրն Հայր՝ ընդ նմին և սրբի սրբի։ Հաւատամք զսուրբ Հոգին սատուած՝ անեղ, անժամանակ, ոչ ծնեալ՝ այլ բղխեալ ՝ի հօրէ, եակից հօր եւ միատեղակից որդւոյ։ Հաւատամք զերրորդութիւնն սուրբ, մի բնեալ, մի սատուածութիւն, ոչ երեք սատուածք, այլ մի սատուած, մի կամք, մի թագաւորութիւն, մի իշխանութիւն. սրարիչ եւ լուսեղէնից և անեղութենէ։ Հաւատամք յհակեղեցի սուրբ՝ զմկրտութիւն մեղաց՝ հաղորդութեամբ սրբոց։ Հաւատամք զմին յերից անճառից զբանն սատուած՝ ծնեալ ՝ի հօրէ նախ քան զյաւիտեանս. ՝ի ժամանակի իջեալ յաստուածածնին կոյս մանրիամ. առեալ յարկինէ նորա՝ միաւորեաց ընդ իւրում՝ սատուածութեանն. ինամանեայ ժուժկալեալ յարգանդի աստատաս կուսին, եւ եղեւ

առաւաձն կատարեալ՝ մարդ կատարեալ, հոգւով եւ մարմնով, ի անձն, ի դէմ, եւ միաւորեալ ի բնութիւն: Առաւաձն մարադացեալ առանց վոխոխման եւ առանց այլայլութեան. անեղին չդադարելի եւ անապական ճնշաւոր՝ եւ ոչ վախճան մարդկութեան նորա: (Զի Հիւս քրիստոս երէկ եւ այսօր՝ նոյն եւ յաւիտեան): Հաւատամք զսէրն մեր Հիւս քրիստոս հզօրեալ՝ ի վերայ երկրի. Հետ երեսաւն առնոյ եկեալ՝ ի մարդկութիւն: Հայր՝ ի վերուստ վիպեալ, զա է որդի իմ սիրելի. եւ Հոգին աւրբ ազատնակերպ իջեալ՝ ի վերայ նորա: Փոքձեալ՝ ի սատանայէ եւ յաղթեալ նմա: Քարոզեալ մարդկան զիրկութիւն: Աշխատեալ մարմնով, վաստակեալ՝ քաղցեալ՝ եւ ծարաւեալ: Յետոյ եկեալ կամաւ՝ ի չարչարանս. խաչեալ եւ մեռեալ մարմնովն, եւ կենդանի առաւաձութեամբն: Մարմինն եգեալ՝ ի գերեզմանի՝ միաւորեալ առաւաձութեամբն, եւ հոգւովն իջեալ՝ ի դժոխս՝ անբաժանելի առաւաձութեամբ բն: Քարոզեալ հոգւոցն՝ աւետեալ զգժոխս՝ եւ ազատեալ զՀոգիս: Յետ երից աւուրց յարուցեալ՝ ի մեռելոց եւ երեւեալ աշակերտացն: Համատամբ զսէրն մեր Հիւս քրիստոս՝ նովին մարմնովն համբարձեալ յերկինս նստա եւ նստեալ ընդ աջմէ Հօր: Անդ եւ պատց է նա վինն մարմնովն եւ փառօք Հօր՝ ի դատել զկենդանիս եւ զմեռեալս: Որ եւ յարութիւն ամենեցուն մարդկան: Հաւատամք եւ դՀաստատումն գործոց. արդ արդոյն կեանք յաւիտենական, եւ մեղաւորացն տանջանք յաւիտենական:

ՁՂ.ՋՈՒՄՆ

Մեղայ ամենասուրբ երրորդութիւնդ՝ Հօր եւ որդւոյ եւ Հոգւոյն պրկոյ: Մեղայ ցեալ եմ սատուծոյ. խոստովանիմ սուտքի սատուծոյ՝ եւ պրկութեան սատուաձածնին, եւ սուտքի քո, Հայր սուրբ, զամենայն մեղս զոր գործեալ եմ: Քանզի մեղայ խորհրդով բանիւ եւ գործով, կամայ եւ ակամայ, գիտութեամբ եւ անգիտութեամբ, մեղայ սատուածոյ:

Մեղայ Հոգւով եւ զօրութեամբ սուտ. մտօքս եւ շարժմամբ սուտ. մարմնով եւ ըզգայութեամբ սուտ: Մեղայ

զօրութեամբ Հոգւոյս. խոստովանութեամբ, անըզգամութեամբ, յանդգնութեամբ եւ երկչոտութեամբ, շատախօսութեամբ եւ ժլատութեամբ, զեղխութեամբ եւ անիրաւութեամբ, չարահաւանութեամբ, յաւահաստութեամբ, եւ ծիծաղութեամբ, մեղայ սատուածոյ:

Մեղայ շար խորհրդով մտացս. նենգութեամբ, սատելութեամբ, խեթիթ, մախաւնօք, յաչազանօք, թուլութեամբ, պատնականի խորհրդով, սրտական, իղական, անառականի, գրաստական, պատանական, ի գիշերի եւ ի աւրինէն. երազական գիջամութեամբ եւ անրջական դարչ ապատրութեամբ, մեղայ սատուածոյ:

Մեղայ ցանկութեամբ մարմնոյս. հեշտութեամբ, պըղծութեամբ, յօրանջմամբ քնոյ, շարժութեամբ մարմնոյս, եւ զաղբատգործութեամբ ի պէսպէս ախտս հեշտալըութեամբ լսելեացս, սրատութեամբ աչացս, ցանկութեամբ սրտիս, իգութեամբ ունգացս, պատշտութեամբ բերանոյս, անժուժկալութեամբ, շատայտութեամբ, եւ սրբեցութեամբ, մեղայ սատուածոյ:

Մեղայ չարաբանութեամբ լեզուիս. սատիսոտութեամբ, սուտ երդմամբ, երդմնազանցութեամբ, Հակառակութեամբ, վիճաբանութեամբ, բանսարկութեամբ, շռայլութեամբ, քաջ, գատաւկատարութեամբ եւ ծաղր, պրախօսութեամբ, Հերձախօսութեամբ եւ անիծաբանութեամբ. սրտնչելով, գժգոհելով, բամբասելով, եւ Հայհոյելով, մեղայ սատուածոյ:

Մեղայ գողութեամբ ձեռացս. ագահելով, պրկելով, Հարկանելով, սպանանելով, եւ ընդ քարչս ածելով, մեղայ սատուածոյ:

Մեղայ ամենայն յօդուածովք չինուածոյս եւ ամենայն անդամօք մարմնոյս, Հնգեակ զգայարանօքս, եւ վեցեկի շարժմամբս, վերամբարձ ոտնահարութեամբ, եւ վայրաքարշ սեղկութեամբ. յաջ և յահեակ խոտորելով, զաւաչանօն սեղանչելով, եւ վերջնոցն չար նշաւակ գոլով, մեղայ սատուածոյ:

Ա՛յլ եւ մեղայ եօթնիցս չանցանօք՝ մահացու մեղօք. Հպարտութեամբ՝ և մտաւիքք նորին. նախանձու՝ եւ մտաւիքք նորին. բարկութեամբ՝ եւ մտաւիքք նորին. ծուլու-

Ա. ՔԱՀԱՆԱՅԱՊԱՏՈՒՄՆ

Ողորմեացի քեզ մարդասէրն աստուած եւ Թողութիւն շնորհեացէ ամենայն յանցաւոր մեզ քոց, խոստովանեցելոյն եւ մոռացելոյն: Եւ ես կարգաւս քահանայական իշխանութեան, եւ հրամանաւն աստուածային՝ թէ. Զոր արձակիցէք երկրի՝ եղիցի արձակեալ երկինս, նովին բանիւն արձակեմ զքեզ յամենայն մեղաց քոց. ի հորդոց, ի բանից եւ ի գործոց. յանուն հօր եւ որդւոյ եւ հոգւոյն սրբոյ: Եւ դարձեալ տամ զքեզ ի խորհուրդս սուրբ եկեղեցւոյ, զի զոր ինչ գործիցես բարիս, եղիցի քեզ ի բարեգործութիւն եւ ի փառս հանդերձեալ կենացն. ամէն:

Օրհնեալ ակր մեր յիսուս քրիստոս. ամէն:
Հայր մեր որ յերկինս:

Լեամբ՝ եւ մասամբք նորին. ապահովեամբ՝ և մասամբք նորին. որկրամոլեամբ՝ եւ մասամբք նորին. բզկտոտեամբ՝ եւ մասամբք նորին, մեզայ ասաւածոյ:

Այլ եւ մեզայ ամենայն պատուիրանացն ասաւածոյ. յանձնառելեացն եւ հրաժարելեացն. զի ոչ զյանձնառացն կատարեցի, եւ ոչ ի հրաժարելեացն հեռացայ: Զօրինս առի՝ եւ չօրինացն հեզգացայ. ի կարգս քրիստոնէութեան հրաւիրեցայ՝ եւ գործոցն անարժան գտայ. պատեալ զչարն կամաւ կորացայ, եւ ի բարեաց գործոց ես ինձէն հեռացայ. վայ ինձ, վայ ինձ, վայ ինձ: Զո՞րն ասեմ, կամ զո՞րն խոստովանիմ. զի անհիւ են յանցանք իմ. ահնաեզի են անօրէնութիւնք իմ. անհետեզի են ցաւք իմ, եւ անբժշկելի են վէրք իմ, մեզայ ասաւածոյ:

Հայր սուրբ, զքեզ ունիմ միջնորդ հաշտութեան եւ բարեխօս առ միածին որդին աստուածոյ. զի խնամոց Թեամբդ որ տուեալ է քեզ, արձակեացես զիս ի կապից մեզաց իմոց, ազատեմ զքեզ:

Ողորմութեամբ Տեառն լի եղեւ երկիր. եւ բանիւ Տեառն երկինք հաստատեցան, եւ Հոգւով բերանոյ նորա ամենայն զօրութիւնք նոցա:

ԿԱՐԳԱԽՕՐՈՒԹԻՒՆ ՀԱՍԱՐԱԿԱՑ ԱՂՕԹԻՑ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ Ս. ԵԿԵՂԵՑԻՈՅ

ՈՐ ԿԱՏԱՐԻ Ի ՄԷՋ ԳԻՇԵՐԻ Ի ԴԷՄՍ ՀՕՐ ԱՍՏՈՒԾՈՅ:

ՕՐՀՆԵԱԼ ՏԻՐ ՄԵՐ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ. ԱՄԷՆ:

ՀԱՅՐ ՄԵՐ *որ յերկինս ես, սուրբ եղիցի ա-նունդ քո: Եկեսցէ արքայութիւն քո. եղիցին կամք քո որպէս յերկինս և յերկրի: Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր: Եւ թող մեզ զպարտիս մեր, որպէս եւ մեք թողումք մերոց պարտապանաց: Եւ մի տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա զմեզ ի չարէ: Զի քո է արքայութիւն եւ զօրութիւն և փառք յաւիտեանս. ամէն:*

Տէր, *եթէ զչարժուն իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս քո:*

Տէր, *եթէ զչարժուն իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս քո:*

Օրհնեալ *համագոյ եւ միաւորական անբաժանելի սուրբ երրորդութիւնն՝ Հայր եւ որդի եւ Հոգի սուրբ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտեանց. ամէն:*

Տէր, *զի բազում եղեն նեղիչք իմ, եւ բազումք յարեան ի վերայ իմ:*

Բազումք ասէին *զանձնէ իմ, թէ չիք փրկութիւն սորա առ աստուած իւր:*

Ա՜հ դո՛, տէր, օգնական իմ ես, փառք իմ ես բարձրացուցիչ գլխոյ իմոյ։
Զայնիւ իմով ես առ տէր կարդացի, եւ լսաւ ինձ ի լերանէ սրբոյ իւրմէ։
Ես ննջեցի եւ ի քուն եղէ, զարթեայ եւ տէր ընդունելի իմ է։
Ոչ երկեայց ես ի բիւրաւոր զօրաց նոցա, որք շուրջանակի պատեալ պաշարեալ պահէին զիս։
Արի, տէր, եւ փրկեա զիս, աստուած իմ. զի դու հարեր զամենեսեան որք էին ընդ իս թշնամանօվքեամբ ի տա՜ տապարտուց, եւ զատամունս մեղաւորաց փշրեացես։
Տեառնդ է փրկութիւն, ի վերայ ժողովրդեան քո օրհնութիւն քո։

Տէր աստուած փրկութեան իմոյ, ի տուէ կարդացի եւ գիշերի առաջի քո։
Մտցեն աղօթք իմ առաջի քո, տէր, խոնարհեացի ունկն քո ի խնդրուածս իմ։
Զի լցաւ չարչարանօք անձն իմ, եւ կեանք իմ ի դժոխս մերձեցան, եւ համարեցայ ես ընդ այնոսիկ որք իջանեն ի գուբ։
Եղէ ես որպէս մարդ առանց օգնականի, եւ ի մեռեալս ազատ։

Որպէս վիրաւորս, որք ննջեն ի գերեզմանի։
Զորս դու ոչ յիշեցեր, նոքա ի ձեռանէ քումմէ մերժեցան։
Եդին զիս ի գբի ներքինումն, ի խաւարի եւ ի ստուերս մահու։
Ձիս հաստատեցաւ պատմուճանք քո, զամենայն զբօսանս քո ածեր ի վերայ իմ։
Հեռի արարեր յինէն զծանօթս իմ, եւ եդին զիս նզովս շաւակ իւրեանց։
Մատնեցայ եւ ոչ ելանէի, աչք իմ տկարացան յողբալ առ քեզ։
Աղաղակեցի առ տէր զօրհնապաղ, եւ համբարձի առ քեզ զձեռս իմ։
Միթէ մեռելոց առնիցես զքանչելիս քո, կամ բժիշկք յարուցեալ խոստովան առնիցեն առ քեզ։
Միթէ պատմեսցի՞ ոք երկնիք ի գերեզմանի զողորմութիւնս նորա քո, կամ զճշմարտութիւնա քո ի կորստեան։
Միթէ ճանաչեսցի՞ն ի խաւարի սքանչելիք քո, կամ արդարութիւն քո յերկիր մոռացեալ։
Ես առ քեզ, տէր, աղաղակեցի, առաւօտու աղօթք իմ ժամանեսցեն առ քեզ։
Ընդէր, տէր, մերժես զանձն

իմ, կամ դարձուցանես զերեսս քո յինէն։
Տնանկ եւ վաստակաւոր եմ ես ի մանկութենէ իմմէ, ի բարձրութենէ խոնարհեցայ եւ ապերեցայ։
Ձիս հաստատեցաւ բարկութիւն քո, արհաւիրք քո խռովեցուցին զիս։
Շրջեցան զինեւ որպէս ջուր, զօր ամենայն պաշարեցին զիս ի միասին։
Հեռի արարեր յինէն զբարեկամս իմ եւ զծանօթս իմ, վասն թշուառութեան իմոյ։
Օրհնեա, անձն իմ, զտէր, եւ ամենայն ակերակք իմ զանուն սուրբ նորա։
Օրհնեա, անձն իմ, զտէր, և մի մոռանար զամենայն տուրս նորա։
Ո քաւէ զվերս քո, բժշկէ զամենայն հիւանդութիւնս քո։
Ո փրկէ յապականութենէ զկեանս քո, պսակէ զքեզ ողորմութեամբ եւ գթութեամբ։
Ո լնու ի բարութենէ զցանկութիւն քո, նորոգեսցի որպէս արծուոյ մանկութիւն քո։
Առնէ ողորմութիւնս տէր, եւ իրաւունս ամենայն ընդդիմելոց։
Եցոյց տէր զճանապարհս

իւր մովսէսի, եւ որդւոցն իսրայէլի զկամս իւր։
Գթած ողորմած է տէր, երկայնամիտ եւ բազմողորմ։
Ոչ ի սպառ բարկանայ մեզ տէր, եւ ոչ յաւիտեան պահէ սիրտ։
Ոչ ըստ մեղացն մերոց արար մեզ տէր, եւ ոչ ըստ անօրինութեանց մերոց հատոյց մեզ։
Արդ որպէս բարձր են երկինք երկրէ, այնպէս զօրացոյց տէր զողորմութիւնն իւր ի վերայ երկիւղածաց իւրոց։
Որչափ հեռի են արեւելք յարեւմտից, այնչափ հեռի արար ի մէնջ զանօրէնութիւնս մեր։
Որպէս գթայ հայր ի վերայ որդւոց իւրոց, այնպէս գթացաւ տէր յերկիւղածս իւր։
Զի նա գիտաց զստեղծուածս մեր, եւ յիշեաց թէ հող եմք։
Մարդոյ որպէս խոտոյ են աւուրք իւր. որպէս ծաղիկ վայրի՝ այնպէս ծաղիկ։
Շնչէ ի նմա հով՝ և ոչ է, և ոչ եւս երեւի տեղի նորա։
Բայց ողորմութիւն տեառն միայ յաւիտեան յաւիտենից ի վերայ երկիւղածաց իւրոց, և արդարութիւն նորա յորդւոց մինչեւ յորդիս։
Ոյք պահեն զուխտս նորա

Յիշեն զպատուհրանս նորա եւ առնեն զնա։

Տէր յերկինս պատրաստեաց զաթոռ իւր, արքայութիւն նորա ամենեցուն տիրէ։

Օրհնեցէք զտէր, ամենայն հրեշտակք նորա, հզօրք զօրութեամբ՝ որ առնէք զբան նորա, ի լսել ձայնի պատգամաց նորա։

Օրհնեցէք զտէր, ամենայն զօրութիւնք նորա, պաշտօնեայք եւ արարածք կամաց նորա։

Օրհնեցէք զտէր, ամենայն գործք նորա, ի ընդ ամենայն տեղիս է տէրութիւն նորա. օրհնեա, անձն իմ, զտէր։

Տէր, լաւ ալօթից իմոց, ունկն դիր խնդրուածոց իմոց ճշմարտութեամբ քում։

Լսեր ինձ արդարութեամբ քով, եւ մի մտաներ ի դատաստան ընդ ծառայի քումմ, զի ոչ արդարանայ առաջի քո ամենայն կենդանի։

Հալածեաց թշնամին զանձն իմ, խոնարհ արար յերկիր զկեանս իմ. եւ նստոյց զիս ի խաւարի պատեալ մեռելոց յաւիտենից։

Զանձրացաւ յիս հոգի իմ, եւ սիրտ իմ խռովեցաւ յիս։

Յիշեցի զաւուրսն զառաջինս, խորհեցայ յամենայն գործս քո. յարարածս ձեռաց քոց խորհեցայ, եւ համբարձի առ քեզ զձեռս իմ։

Անձն իմ որպէս զերկիր ծարաւի է առ քեզ, վաղվաղակի լուր ինձ, տէր, զի նուազեցաւ յինէն հոգի իմ։

Մի դարձուցաներ զերեսս քո յինէն, նմանիցիմ այնոցիկ, որ իջանեն ի գուբ։

Լուսուսցես առ առաւօտս զողորմութիւնս քո, զի ես ի քեզ, տէր, յուսացայ։

Ցոյց ինձ ճանապարհ՝ յոր գնացից, զի առ քեզ, տէր, համբարձի զանձն իմ։

Փրկեա զիս ի թշնամեացս իմոց, տէր, զի զքեզ ապաւէն ինձ արարի։

Ուսո ինձ առնել զկամս քո, զի դու ես աստուած իմ։

Հոգի քո բարի առաջնորդեսցէ ինձ յերկիր ուղիղ։

Վասն անուան քո, տէր, կեցուսցես զիս, արդարութեամբ քով հանցես ի նեղութենէ զանձն իմ։

Ողորմութեամբ քով սատակեա զթշնամիս իմ, եւ կորո զամենայն նեղիչս անձին իմոյ, զի ես ծառայ քո եմ։

Փա՛ռք հօր եւ որդւոյ եւ հոգւոյն սրբոյ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Երգ առաջն Նախախնամ Հայոց Կաթողիկոսի սաղմոսել ի պաշտամունս գիշերոյ։

Յիշեսցուք ի գիշերի զանունն քո տէր։

Բնակեսցեն սիրտք մեր զբանս քոյիմ. եւ լեզուք մեր պատմեսցեն զդործս երկնաւոր թագաւորիդ։

Ի մէջ գիշերի յարուցեալ խոստովանեսցուք ընդքեզ տէր։

Զաղօթս մեր ուսցուք քեզ տէր. ի գալ լիցի քո ի մէջ նոր երուսաղէմի։

Ի գիշերի համբարձցուք ընդձեռս մեր սրբութեամբ առ քեզ տէր։

Ի ձայն գոհութեան ամենայն հոգիք օրհնեցէք ընդտէր։

Զարթիմ փառք իմ, զարթիմ. եւ ես զարթեցայ առաւօտուց. ալէլուիա։

Զարթիմ ընդ գերագրեալսն, մանկունք վերին նըմն սիօնի. ալէլ.

Զարթիմ որդիք լուսոյ, ի յօրհնութիւն հօրըն լուսոյ. ալէլ։

Զարթիմ փրկեալք արեամբ, եւ տուք ընդփառըն վերինն. ալէլ.

Զարթիմ նոր ժողովուրդք, նոր երգս առեալ նորոգողին. ալէլ.

Զարթիմ հարսունք հոգւով. սպասեալք գալըստեանն փեսային. ալէլ.

Զարթիմ վառեալք լուսով ընտրեալ իմաստունն տուըք կանացն. ալէլ.

Զարթիմ պատրաստեցէք իւղ լապտերաց ձերեմ արտանուս. ալէլ։

Զարթիմ եւ մի նըմնջէք, նըմանն չիմայր կուսից նիրհէք. ալէլ.

Զարթիմ երկիւղածութեամբ եւ արտասուօք զայս աստիճանըս. ալէլ.

Զարթիմ ընդեր նըմնջես, աչեր մի մերժեր լըսմիզ իսպառ։

Ասէ տէր օգնեա մեզ. տաճ ցոքք անուանըդ քոմ ընդփառաս։

Այժմ եւ յաւէտ. հօր եւ որդւոյ, եւ սուրբ հոգւոյն. ամէն։

Զարթուցեալքս ի զանազանմանէ գիշերային հանգըստառնէ։

Շնորհեսցէ մեզ մարդասէր

ահէր մրմրմրմարմարութիւն եւ
՚ի սիրտս նոցա եկեղեցւոյ։
Ամէն եւ դոյլութեամբ կոչ-
ցեաք ՚ի յաղօթս։
Եկեալ խոնարհութեամբ
ընկալարկանս։
Եւ զերծոյթ ՚ի քրիստոսէ
զքահանութիւն եւ ընկեց զո-
զոմութիւն։

Աղերսեցարուք եւ ի համո-
զիչ երկրպագութեանդ. հա-
մարձակութեամբ ընդ ի գործս եր-
կիւղից. սիրով ընդունել
նեմք։

Փառք քեզ։ Ով յանո-
րոշեալ յաւիտենից զաւետեաց
պայծառագոյր զաւետեանցն սուրբ
բանս. սիրով առաքեալ
աշխարհս հօր անեղ որդի։
Փառք քեզ։ Ով տեսչա-
թեամբ խոնարհեալ զաւետեանցն
արարածս. սիրով առաքեալ
բնկալութեան անքնապատ աղա-
բեր։

Տէր։ Ժողովրդապետեալ եւ
կեղեցւոյ ՚ի քեն հայցեն աղե-
ալ. հովիւ բանին, ոչխարքն

ասա՛ բանասիրդ հօտի։
Ամէն. ալէլուիա. ալէլուիա.
ալէլուիա։
Ամէն. ալէլուիա. ալէլուիա.
ալէ.

Ղարզ։

Զարմացեալքս առնելոյ
՚ի հանգըստանել քընոյ, զոր
հնարէնոյ մեզ մարգասէրն
աստուած ՚ի մխիթարու-
թիւն եւ ՚ի սիրտս ամենայն
կարօտեցեալ մերոյ։ Եւ ե-
կեալքս վայրան հոգեւոր
երգով ՚ի փառաբանութիւն
եւ ՚ի պատիւ ամենասուրբ
անուան տեառն մերոյ եւ
փրկչին յիսուսի քրիստոսի։
Ամէն եւ դոյլութեամբ կոչ-
ցեաք յաղօթս առաջի նորա։
Եւ պահպանութեամբ ընդունիլ ՚ի
դիշերային ժամուս յոյսովիկ,
վասն իրաւանց եւ արդարու-
թեան նորա։ Որ ընտրեցոյց ըզ-
մեզ ազգութեամբն խ-ով.
եւ հնարէնոյ մեզ բերել ըզ-
նմանութիւն երկնային հրեշ-
տակացն ՚ի վայրաբնակիցս
տեառն աստուծոյ ամենեցուն
եւ մեզ լինիլ։ Եւ մեք այսո-
հետեւ սրբեալ զանձինս

մեր ՚ի խղճէ եւ ՚ի չար գործոց։
Համբարձմամբ ըզձեռս մեր
՚ի սրբութիւն առանց բար-
կութեան եւ երկմտութե-
ան։ Հաւատով խնդրեա-
ցուք ՚ի նմանէ ըզբաւու-
թիւն եւ ըզմտութիւն յան-
ցանց մերոց։ Խոստովան
լինելով ըզգալանիս սրտից
մերոց ծանկապիտին աստու-
ծոյ։ Որպէս զի ընդունելով
ըզզղջմանս մեր ազօթիւք
եւ բարեխօսութեամբ ամե-
նայն սիրելոցն։ Ընդհանէ մեզ
մարգասէրն աստուած կեալ
առաքինութեամբ եւ անա-
րատ վարուք ըստ կամացն նո-
րա յամենայն աշխարհիս։ Եւ ար-
ժանաւոր լինելով յաւիտե-
նական եւ երկնային խոր-
հուրդն։ Զոր խոստացաւ սիրե-
լեաց իւրոց՝ ճշմարիտն աս-
տուած՝ յհոսա. քրիստոս.
տէր մեր կեցո՛ եւ ողորմեա։

Կեցո՛ տէր։

Զմնացուածդ դիշերիս խաղա-
ղութեամբ անցուցանել՝ հա-
ւատով ՚ի տեառնէ խնդրե-
լոցն։

Շնորհեա՛ տէր։

Զհրեշտակ խաղաղութեան

պահապան անձանց մերոց.
՚ի տեառնէ խնդրե՛ք։

Զքաւութիւն եւ ըզմոռա-
ցութիւն յանցանաց մերոց՝ ՚ի
տեառնէ խնդրե՛ք։

Զսիրոյ խաչին մեծ եւ կարող
զօրութիւնն յօգնութիւնն
անձանց մերոց՝ ՚ի տեառնէ
խնդրե՛ցէք։

Եւ եհաս մահաբեր վասն ճշմա-
րիտ եւ սուրբ հաւատոյս
մերոյ՝ զտէր աղաչեսցուք։

Տէր ողորմեա՛։

Զանձինս մեր եւ ըզմիմեանս
նոյն տեառնէ աստուծոյ ամե-
նակալին յանձն արասցո՛ք։

Քեզ տեառնդ յանձն եդիմ
ցո՛ք։

Ողորմեաց մեզ, տէր աստուած
մեր, ըստ մեծի ողորմութեան
քումմ. աստուածք ամենե-
քեան մահաբեր մեռանիցին։

Տէր ողորմեա՛, տէր ողորմեա՛
տէր ողորմեա՛։

Եւ՝ ասի տէր ողորմեա քսան պատգամի աւուրն։
Ի կիւրակէս և ՚ի տօնս տէրունականս՝ երեք տէր
ողորմեա. իսկ ՚ի տօնս սրբոց՝ չորս տէր ողոր-
մեա. և յաւուրս պահոց՝ հարիւր տէր ողորմեա։

Ցեռան Ներսիսի Հայոց Կաթողիկոսի՝ ողբերգութիւն անձին դղջացկոյ, եւ բողոք իւրաքանչիւրոյ դիմի խոստովանաբար։

Ա հաւրհ ամենայն. առ քա նայեցեա՛ղ. ախտակիցս լերա՛ք։ Բանամ ըզբերա՛ն. բարբառիմ լեզուա՛ս. բողոքեմ զանձնէ՛ս. տէր ողորմեա՛. տէր ողորմեա՛. տէր ողորմեա՛։ Գող եղէ մեղաց. գերեալ կոբրատեան. գուբ ինձ վարեցի։ Գաւեցի զանձն իմ. գաւաճանեցի. գարան գոյծեցի. տէր ողոր.

Երբեմն էի լոյս. և այժմ եմ խաւար. և բոլոր մահու։ Զիա՛րդ պատահեցից, զմիս մեղաց իմոց. զի բազում են յոյժ. տէր ողոր.

Էրկինք և երկիր. եկայք ողբացեք. եղկելի զանձն իմ։ Ընարեցի ըզչարն, ընկալայ կամաւ, ըզխոյս մեղաց. տէր ողոր.

Թաթաւիմ ապզմով. թաւալլիմ՝ի մեղս. թօթափիլ չկամ ըեմ։ Ծանո ախտիս լցեալ. ժահահոտ եղէ. ժամանակս բազում. տէր ողոր.

Ի բաց մեկնեցայ. ՚ի սուրբ խորհրդոց. ՚ի բարեաց գոյծոց։ Լաւ վարկաւ անձն իմ. լուսոյն հեռանալ. լինել ընդ խաւար. տէր ողոր.

Խորհուրդըք չարին. խաբեն ըզհոգիս. խորասոյզ առնեն։ Ծածկեն անդ ընդ օք. ծիծաղին դլորմամբս. ծանակ գնա առնեն. տէր ողոր.

Կամաւ կորացայ. կարկաւեալ անձամբս. կանգնիլ ոչ կարեմ։ Հաւր մեղայ կիսզոյ. հերդեհեաց որ չիս. հոգեւոր բարիս. տէր ողոր.

Զապիեցայ մեղօք. ձաղեցին սեռոյք. ձանձրացաւ հոգիս։ Ղեկն դաւնաւթեան. զօրեալ ՚ի սիրտ իմ. զամբար իմ չինաւ. տէր ողոր.

Ճաշակմամբ մեղայ. ճաշեցի ըզմահ. ճախս աղ բառացայ։ Պեռեալ եմ հոգւովս, մոլորեալ մօքս. միայն կամ մարմնովս. տէր ողոր.

Յորոգայթ մահու. յորսողին անկայ. յաղթեցայ յախտից։ Նետից թըշնամւոյն. նըշաւակ եղէ. նոր միշտ խոցոտիմ. տէր ողոր.

Շուրջ պատեալ զինեաւ. շունք բազում եղեն. շան զախին արեամբս։ Որս եղէ չարին. ուռկանաւ մեղաց. պատցաւ զանձն իմ. տէր ողոր.

Զարաչար վըշտօք. չարչարի անձն իմ. չունիմ դադարումն։ Պատատգան գըտայ. պարտուց յանցանաց. պարտեալս ՚ի մեղաց. տէր ողոր.

Նորին տէրն Ներսիսի Հայոց Կաթողիկոսի՝ երգ ապօթական՝ ի գէմս սրբոց երբորդութեան, նաեւ իւրաքանչիւրոյ դիմի երրորդութեանն տանձնական։

Ա ռաւօտ լուսոյ. արեգական արդար. առ քա լոյս ծագեա՛։ Բըղխուսն ՚ի հօրէ. բըղխեա ՚ի հոգւոյս. բան քեզ ՚ի հաճոյս։

Գանձդ ողորմութեան. գանձիդ ծածկելոյ. գըտայ զնա ապա։ Գուսան ողորմութեան. գաւանողս բաց. գաւեցո վերնոցն։

Երրեակ միութիւն. եղելոյ իննամոյ. եւ ինձ ողորմեա։ Զարմիկ, տէր, յօգնել. զարթո ըզմիմբեալս. զո՛րութիւնդ նըմանիլ։

Էգ հայր անըսկիզբն. էակից որդի. է միշտ սուրբ հոգի։ Ընկալ զիս գծած. ընկալ ո՛ զղջմած. ընկալ մարդասէր։

Թագաւոր փառաց. թողութեանց տըւող, թող ինձ ըզյանցանս։ Ժողովող բարեաց. ժողովեա եւ զիս. ժողովս անդրանկաց։

Ի քէն տէր հայցեմ. ՚ի մարդասիրդ. ինձ բըժշկութիւն։ Լեր կեանք մեռելոյս. լոյս խաւարելոյս. լուծանող գաւոյս։

Խորհըրդոց գիտող. խաւարիս ընորհեա. խորհուրդ լուս

առաւօտ։ Ծընռնդ հօր ծոցդ. ծածկելոցս սուտերատ. ծա-
դեա լոյս վառօդ։

Կենարար փրկիչ. կեցո ըզ-
մեռեալս. կանգնեա զդըր-
բեալս։ Հաստեա հաւատով.
հաստատեա յուսով. հիմնե-
ցո սիրով։

Զայնիւս ազաչեմ. ձեռօքս
պաղատիմ. ձիր բարեաց շնոր-
հեա։ Ղամբարամբ լուսոյ.
զեկաւար ճարտար. զօղեալս
ամբաւո։

Ճառագայթ վառօդ, ճանա-
պարհ ինձ ցոյց. ճեպել 'ի
յերկինս։ Միածինդ հօր.
մոյծ զիս յառագաստ. մա-
քուր հարսանեացդ։

Յարժամ գաս վառօք, յահա-
գին աւուրն. յիշեա զիս քրիս-
տոս։ Նորոգող հնութեանց.
նորոգեա եւ զիս. նորոգ զար-
դարեա։

Շնորհատու բարեաց. շնոր-
հեա զքաւութիւն. շնորհեա
զիմաստութիւն։ Ուրախացո
սէր. ոգւոյս փըրկութեամբ.
որ վասն եմ 'ի սուգ։

Զար մըշակողին. չար սեր-
մանց նորին. չորացո զպըր-
տուն։ Պարգեւիչ բարեաց.
պարգեւեա խնդ. պարտեացս
թողութիւն։

Զուր շնորհեա աչացս. ջերմ
հեղուլ զարտօսր. ջընջել ըզ-
յանցանս։ Ռեմինդ քաղցու-
ւամ հոգւոյս ապրս. ւամ
ցոյց ինձ լուսոյ։

Սէր անուն յիսուս. սիրալ
քոյ ճմլեա. սիրտ իմ քարե-
զեն։ Վասն զրկութեան.
վասն ողորմութեան. վերըս-
տին կեցո։

Տենչալոյդ սեպհեամբ. տուր
ինձ յագենալ. սէր յիսուս
քրիստոս։ Բարեմիդ երկինս
ւոր. բոտեա զաշակերտս.
բանից երկնայնոց։

Ձօղ արեան քո, սէր. ցօղեա
'ի հոգիս. ցընծացեալ անձն
իմ։ Խնճեալըս մեղօք. վնա-
ծեալ ազաչեմ. վերստին ինձ
բարիս։

Փըրկիչ բոլորից. վառիր
զիս փրկել. փորձութենից
մեզաց։ Ֆառիչ յանցանաց.
քաւեա զօրհնեալսն. քեզ
երգել ըզվառս։

Սուրբ ածնեալն բարեխո-
սութեամբ, յիշեա, սէր,
եւ ողորմեա։

Զինի սիրէ Աղօխս։

Զքեզն գոհանամք, սէր սա-
տուած մեր, որ շնորհեցեր
մեզ հանգիստ քնոյ խաղա-
ղութեամբ։ Եւ զարիծու-
ցեալ ժամանեցուցեր զմեզ
կանխել յերկրպագութիւն
ահաւոր եւ փառաւորեալ
անուանդ քում սրբոյ։ Տուր
մեզ, սէր, ազաչեմք զքեզ,

զմնացեալս գիշերիս խաղա-
ղութեամբ անցուցանել. և
զամենայն ժամանակս կենաց
պանդխտութեան մերոյ, եր-
կիւղիւդ քո ամրացս եւ պա-
հեա։ Որպէս զի զգուշա-
թեամբ՝ և անարատ վարուք
կրօնաւորեալք յայմ աշ-
խարհի, ժամանեցուք քան-
զքոյն եւ 'ի խաղաղ նաւա-
հանգիստ յաւիտենական 'ի
կեանսդ։ Շնորհօք և մարդա-
սիրութեամբ տեառն մերոյ և
փրկչին յիսուսի քրիստոսի։
Ընդ որում քեզ հօր եւ հո-
գւոյդ սրբոյ վայելէ փառք
իշխանութիւն եւ պատիւ.
այժմ և միշտ և յաւիտեանս
յաւիտենից. ամէն։

Խաղաղութիւն ամենեցուն։
Աստուծոյ երիւրպագեսցուք։

Եայեաց, սէր բարերար, ո-
ղորմութեամբ քոյ յերկրըս-
պագս և 'ի փառաբանիչս
անուանդ քում սրբոյ։ Տէր
ղօրութեանց, խաղաղացո
զանձինս մեր յամենայն սա-
տանայական խառնուածոյ
և յաշխարհական ղեօսանաց։
Զհրեշտակ խաղաղութեան
քո առաքեա առ մեզ. որ և
կեալ պահեսցէ զմեզ անխըռ-
ուռս 'ի տուէ եւ 'ի գիշերի,
յարմնաւորութեան եւ 'ի հան-
գըստեան մերում։ Որպէս զի
բարեպաշտութեամբ եւ ար-
ժանաւորապէս քեզ տեառնդ
ծառայելով 'ի կեանս յաւի-
